ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«29» օգոստոսի 2014թ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 94 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 14-րդ կետի 4)-րդ ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինության բնագավառում նշանակալի ավանդի համար» գերատեսչական ոսկե մեդալի շնորհման կարգը, հանձնաժողովի կազմը, վկայականի ու ոսկե մեդալի ուրվագծերը և ոսկե մեդալի նկարագիրը հաստատելու մասին» N94 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ՈՒ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ ԵՎ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով համապատասխանաբար հաստատված N 1 և N 2 հավելվածները:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

29.VIII 2014թ.

ք. Երևան